

## ԲԱԲԿԵՆ ՍՐԿ. ՆԱՆՅԱՆ

## ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Մեր Տեր Հիսուս Քրիստոս մարմնանալով, մարդանալով ու ծնվելով Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնից՝ Իր երկրային կյանքով, հարությամբ ու համբարձմամբ եկավ մարդկանց հրաշափառապես փաստելու, որ մարդկության համար իղձ ու անփրական ցանկություն դարձած Փրկությունն ու Ամսահությունը անփրականա՛նալի և մտացածին բաներ չեն: Դրանք գոյություն ունեն և հասանելի են բոլորին՝ առանց որևէ խտրականության: Իր աստվածային առաքելությունը իրագործելով՝ Ամենաստեղծ Փրկիչը հաշտության միջնորդ ու զոհ դարձավ մարդկանց և Աստծո միջև:

Միջնորդության հայտնության հանգամանքն ի սկզբանե իսկ ներկա է եղել մարդկության պատմության մեջ: Հին Ուխտից սկսած դրա ի հայտ գալը պայմանավորված էր արարչաստեղծ բարձրությունից ու դրախտային մաքրությունից զրկված մարդու՝ իր Արարչի հետ ամբողջական հաղորդակցության անկարողությամբ: Առաջին անկումը, սակայն, չդարձավ մարդկության վերջին անկումը...

Աստված մշտապես մարդկությանը միջնորդաբար ընդառաջ է եղել.

ա. Նոյ արդարով,

բ. Նահապետներով - օրենք,

գ. Դատավորներով - օրենք,

դ. Մարգարեներով - մարգարեություն:

Աստվածային սերը մարդկության անատմամբ չսահմանափակվեց միայն սրանով, անսահմանափակ էր անկատի ունենալը, որ բոլորը, սկսած առաջին անհապետից և վերջացրած «վերջին մարգարե» Հովհաննես Մկրտիչով, մարդկությանը անխապատրաստում էին Աստվածային անմախադեպ անփրաբերությանը. «Ջի այնպես սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ, զի ամենայն, որ հաւատայ ի նա, մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտեանականս» (Հովհ. Գ 16): Այսպիսով, Հիսուս Քրիստոս՝ Որդին Աստծո, դարձավ միակ, ճշմարիտ և անփոխարինելի Միջնորդը մարդ արարածի և Արարիչ Աստծո միջև<sup>1</sup>:

Քրիստոսի հետ և Քրիստոսից հետո մարդու և Աստծո միջև միակ Միջնորդը դարձավ Սուրբ Հոգով (Գործք. Ի 28) առաջնորդվող և Քրիստոսի խորհրդավոր մարմին եղող Եկեղեցին (Եփես. Ե 28, Կողոս. Ա 18, 24):

<sup>1</sup> Հարկ է հիշել նաև, որ Քրիստոսի Ծնունդը հայերի կողմից ընկալվել է որպես Հայտնություն՝ Աստվածաբանություն – *Επιφάνεια*, *Θεοφάνεια*, *Epiphania*, *Theophania*.

\*  
\* \* \*

Պատմությունը եկավ փաստելու, որ Եկեղեցու ճանապարհն իր վարդապետի խաչի ճանապարհի կրկնօրինակն էր, իսկ պատկը՝ պատրաստված էր նույն փշե-րից: Քրիստոնեության հիմնադրումից ի վեր տարբեր մոլորությունները մի պահ անգամ չեն դադարել Եկեղեցուն ճնշելուց ու հալածելուց: Ժամանակի ընթացքին անհրաժեշտ է եղել պաշտպանել՝ Քրիստոսի ուղղափառ հավատքն անաղարտ և սուրբ պահելու համար: Մարդկային սահմանափակ միտքը, սակայն, ամեն անգամ չէ, որ կարողացել է պատշաճ պատասխաններ գտնել. չէ՞ որ «իմացողը իմացու-թյամբ իմացաբար իմանում է իմանալի իմացումը»<sup>2</sup>, բայց ոչ երբեք՝ անիմանալին, որն Աստծուց տակավին չի հայտնվել մարդուն:

Ահա հենց այսպիսի դժվարին կացություններում ու ճգնաժամային վիճակներում է, որ տեղի է ունենում Աստվածային Հայտնությունը<sup>3</sup>:

Ինչպե՞ս ճանաչել, սակայն, ճշմարիտ Աստվածային Հայտնությունը: Այս հար-ցը որքան դժվարին, նույնքան էլ կարևոր է եղել: Այդ իսկ պատճառով ժամանակի ընթացքում մշակվել են համապատասխան չափանիշներ, որի բավարարման դեպ-քում միայն որևիցե հայտնություն կարող էր հավակնել որպես Աստվածային հը-չակվելու և Ընդհանրական Եկեղեցու կողմից ընդունելության արժանանալու: Դրանք են.

1. Հայտնութենական ճշմարտության բովանդակությունը.
2. Ընդհանրական Եկեղեցու ընդունումը:

## Ա. ՀԱՅՏՆՈՒԹԵՆԱԿԱՆ ԾՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հայտնություն մասնա և առաջ մանրագմին քննում են Եկեղեցու վարդապետները: Այն իր հերթին պետք է համապատասխանի հիմնական երկու չափանիշների.

<sup>2</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Հայոց Պատմություն, Երևան, 1982, էջ 243:

<sup>3</sup> Մեր հոդվածը բնավ նպատակ չունի ընդգրկելու աստվածաբանության մեջ «Աստ-վածային Հայտնություն» վերնագրի տակ հայտնի բավականին տարողունակ բնագավառը:

Ինչ վերաբերում է այլադավան կրոններին, ապա մեզ ծանոթ Հայտնությունը հանդիպում է միայն մոլիսիսականության և մահմեդականության մեջ: Այլ կրոններում գերագույն գոյության ընկալումն այնպիսին է, որ կարծես բացառում է հայտնությունը՝ իր չափազանց շեղվածության (բրահմանիզմ, բուդդիզմ, դաուսիզմ) և իր չափից ավելի նյութականության համար (այդպիսին են բոլոր մատուրալիստական և միֆոլոգիական կրոնները): Տե՛ս Энциклопедический Словарь (Брокгауз и Эфрон), том 22. С. — Петербург, 1897, стр. 424.

### ա. Համաձայնությունն Սուրբ Գրքի հետ

Նորահայտ հայտնությունը, որը հանդես է գալիս տեսական ուսմունքի տեսքով, պետք է ամբողջովին համահունչ լինի Սուրբ Գրքի հետ, որը «Հայտնության բառացի արտահայտությունն է»<sup>4</sup>: Այն, որ մի խնդրի շուրջ Աստվածաշունչ մատյանը հստակ տեղեկություններ չի հաղորդում, և կամ որևէ եզր առհասարակ բացակայում է Սուրբ Գրքից, դեռևս վերջնական և վճռորոշ փաստարկներ չեն հոգուտ հայտնության ժխտմանը: Որևէ հարցի կապակցությամբ սուրբգրային լռությունը ամենևին էլ անհամաձայնություն չի նշանակում<sup>5</sup>: Պարզապես նույն Սուրբ Գրքում առկա են այնպիսի հատվածներ, որոնք անուղղակիորեն գալիս են փաստելու և վավերացնելու խնդրո առարկայի ճշմարտացիությունը: Անշուշտ, բոլորովին այլ և մախնական բարդություններ չհարուցող պարագա է, երբ Աստվածաշունչը տվյալ հարցի վերաբերյալ ուղղակի վկայություններ է պարունակում:

Այդուհանդերձ, սրանով հարցն իր վերջնական պատասխանն ու միանշանակ լուծումը չի ստանում: Բանն այն է, որ հատկապես Նոր Կտակարանում առկա են այնպիսի հատվածներ, որոնք առաջին հայացքից կարող են միմյանց ոչ միայն չհամապատասխանող, այլև բացառող և իրարամերժ թվալ: Դրա ամենացայտուն օրինակը Ձիթենյաց լեռան վրա, Գեթսեմանի պարտեզում, Քրիստոսի արտասանած աղոթքն է. «Հայր, եթե կամիս, անցո՛ր՝ զբաժակս զայս յինչն. բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին» (Ղուկ. ԻԲ 42): Ոմանց համար սա անհասկանալի և անբացատրելի էր թվում. «Ինչպե՞ս «Ես և Հայր իմ մի ենք» ստող Քրիստոս կարող էր տարրորոշել իր կամքը Հորից», - տարակուսում էին նրանք: Եթե Հոր կամքը մի բան է, Որդու կամքը՝ մեկ այլ, հետևաբար տրամաբանորեն բխում է, որ Սուրբ Երրորդության երրորդ Անձը՝ Սուրբ Հոգին ևս պետք է ունենա իր անկախ կամքը, որն էլ իր հերթին կլինի մեկ ուրիշ բան: Այսպիսով կունենանք եռակամյա մեկ Աստվածություն:

Նման հերձվածներն այնքան պտտվեցին ուղղափառ աստվածաբանության շուրջը, մինչև որ Եկեղեցին ընդունեց «Համակամության Վարդապետությունը»:

Այստեղից կարելի է հետևցնել, որ նույնիսկ Նոր Կտակարանում կան այնպիսի հատվածներ, որոնք կարիք ունեն հավելյալ մեկնաբանության և համապատասխան վերլուծության: Սա է ենթադրում մահ (չափավոր) կրիտիցիզմով հազեցած բողոքական աստվածաբանությունը, որի հետքերով գնաց մահ կաթոլիկ աստվածաբանությունը, որն իր «Instruction on the Historical Truth of the Gospels» (Roman Pontifical Biblical Commission-1964)-ով հայտարարեց, թե Ավետարանները

<sup>4</sup> Вл. Лосский, Мистическое Богословие (= МБ), Киев, 1991, стр. 102.

<sup>5</sup> Այսպես, կաթոլիկ աստվածաբանները, շահարկելով այս հանգամանքը, գտնում են, որ Սուրբ Գրքում չկա ոչ մի ուղիղ վկայություն Սուրբ Հոգու՝ Որդուց ելնելու մասին, որը դեռևս չի նշանակում, թե Սուրբ Գիրքը բացառում է այդ: Նրանք պնդում են, որ կան համարներ, որոնք պարզորոշ կերպով ծանուցում են Քրիստոսի Հոգու՝ Քրիստոսից բխելու մասին: Տե՛ս Լ. Епифанович, Записки по обличительному богословию, Новочеркасск, 1891 г., стр. 18 - 19, ինչպես նաև Георгий Титов, Уроки по пространному христианскому катехезису, Православная Кафолической Восточной Церкви. Тифлис, 1877 г., стр. 12.



Օրթոդոքս Եկեղեցին ևս «Առաքելական Սրբազան Ավանդության» տակ հասկանում է այն Ավանդությունը, որը գալիս է առաքելական շրջանից և որը 1-4-րդ դդ. այդպես էլ անվանվել է՝ «Առաքելական Ավանդություն»<sup>8</sup>:

Հոռմեական Եկեղեցին, սակայն, Ավանդության իր ընկալումն ունի: Արդեն Տրիտենդյան XIX ժողովը (1545-1563) Ավանդությունն ավելի բարձր դասեց ոչ միայն տվյալ ժողովից, այլև ընդհանրապես Սուրբ Գրքից: Վերջին որոշումը, ինչպես կոտենենք քիչ հետո, ծխսովեց Կաթոլիկ Եկեղեցու հետագա դավանաբանական որոշումներով: Տրիտենդյան ժողովի մասնակից Կոռնելիոս Մուսար հայտարարում էր, որ հավատքի հարցերում նա Պապին ավելի է վստահում, քան հազարավոր Օգոստինոսների և Հերոնիմոսների: Ահա հենց այս ենթահողի վրա էլ Հոռմի մեծահամբավ Պիոս IX Պապը հայտարարեց. «Ինքը Եկեղեցին կենդանի Ավանդություն է, իսկ Եկեղեցին՝ Պապն է, հետևաբար՝ Պապը Ավանդություն է»<sup>9</sup>, և իբրև աստվածային հայտնությամբ իր Եկեղեցուն տրված նոր դոգմաներ ընդունեց «Սուրբ Կույս Մարիամի անարատ հղության» (1856) և «Պապի (ex cathedra) անսխալականության» (1870) վարդապետությունները, որով Պապը բարձր դասվեց նաև Ավանդությունից:

#### Բ. ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Աստվածային Հայտնության քննության ենթարկելու երկրորդ հիմնական և վերջին փուլն է Տրիտենդյան ժողովի առյուծը: Ամմիջապես հարց է առաջանում. ինչո՞վ էր պայմանավորված՝ իր ճշմարիտ լինելը գրեթե ապացուցած հայտնության այս հանգրվանի մեջ մտնելը:

Տրիտենդյան ժողովը, որպես այդպիսին, Աստծուց օժտված էր այնպիսի իշխանությամբ, որը լիազորում էր նրան քրիստոնեական հավատքի մերթին և էական հավատալիքները բարձրացնել դոգմայի աստիճանի, որպեսզի այդպիսով նախ մի տեսակ պատմեչ ստեղծվեր ուղղափառության և նրան կրնակակոխ հետապնդող հերետիկոսությունների միջև, և որպեսզի տվյալ խնդիրները զերծ մնային հետագա մասնավոր մեկնաբանություններից ու հավելումներից, որոնց հետևանքով շատ հնարավոր էր չասենք՝ հավանական կլինեին (և պատմությունից գիտենք, որ այդպես էլ եղել է) նաև տարաբնույթ շեղումները:

Սրա հետ մեկտեղ Տրիտենդյան ժողովը նաև վերստուգիչ մարմնի պաշտոնն էր կատարում: Միայն այս ժողովի վերջնական հաստատումն ու վավերացումն էր, որ Աստվածային Հայտնությունը կիրառական և ընդունելի էր դարձնում ողջ Ընդհանրական Եկեղեցու համար:

<sup>8</sup> Протосвитель Михаил Помозанский, Православное Догматическое Богословие (в сжатом изложении) Новосибирск, 1993, стр. 67.

<sup>9</sup> Адольф Гарнак, История Догматов (Общая история европейской культуры"). С. - Петербург, том 6, стр. 447.

Այս առումով հետաքրքրական է Տիեզերական ժողովների հետագա նախատա-  
ցիրը: Ինչպես վերը մշվեց, Տիեզերածողովը օժտված էր բացառիկ իշխանությամբ,  
որով նրա հռչակած կանոններն ու դոգմաներն ընդունելի էին դառնում Քրիստոսի  
աշխարհապիտո հոտի համար: Սա ուժի մեջ էր այնքան ժամանակ, որքան ժո-  
ղովը Տիեզերական էր, իսկ եկեղեցին՝ Ընդհանրական: Այն պահից ի վեր, երբ  
Հայաստանյայց եկեղեցին և քույր եկեղեցիներն իրենց սկզբունքային անհամա-  
ձայնության պատճառով խզեցին իրենց կապը մի եկեղեցու հետ, որի տեսակետ-  
ներն ու մոտեցումները նրանք այլևս չէին կիսում, *de facto* Ընդհանրական եկեղե-  
ցին, որպես այդպիսին, դադարեց գոյություն ունենալուց<sup>10</sup>:

Միանգամայն այլ հարց է, թե ինչու՞ և ինչպե՞ս անհամաձայնությունը ներթա-  
փանցեց Տիեզերածողովի ամրակոտ պարիսպներից ներս: Մեր եկեղեցու տեսան-  
կյունից 451 թվականից սկսյալ Տիեզերական ժողովը *de jure* վերածվեց տեղական  
ժողովի, որը «Տիեզերական» անվան տակ գումարվում էր իրեն Ընդհանրական  
ճանաչող մի եկեղեցու կողմից: Բաժանումից հետո Հայոց եկեղեցին երբեք իրեն ի-  
րավունք չվերապահեց սեփականացնելու «Ընդհանրական» տիտղոսը և, դիցուք,

<sup>10</sup> Ո՛չ Հռոմեական եկեղեցին, որ սեփականացրեց Ընդհանրական (Catholique), ո՛չ էլ Արևելյան Ուղղափառ եկեղեցին, որ յուրացրեց Տիեզերական (Œcuménique) «մեծահրե-  
չին անունները» (Տե՛ս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Հայոց եկեղեցին, Կոս-  
տանդնուպոլիս, 1911, էջ 139), այդպես էլ չընկալեցին «Ընդհանրական» եզրի ճշմարիտ և  
վավերական իմաստը: Այսպես, Օրթոդոքս եկեղեցու մեծագույն աստվածաբան Վ.  
Լուսակին, խոսելով Կաթողիկ եկեղեցու ոչ պակաս աստվածաբանի համբավ ունեցող Հայր  
Կոնգ արի մասին, ասում է. «...несмотря на все его старания быть объективным, он)  
остаётся тем не менее зависимым от предвзятости известных воззрений...» (Տե՛ս ՄԵ, էջ  
102): Նա ևս չի կարողանում, սակայն, գերծ մնալ այդ նույն կանխակալությունից, որի մեջ  
մեղադրում է Կոնգ արին, երբ խոսում է իր եկեղեցու՝ Տիեզերական ժողովի ունեցած  
ըմբռնման մասին: Ըստ նրա, Տիեզերական - Ընդհանրական եզրը խարսխված է ոչ այլ  
բանի վրա, եթե ոչ աշխարհագրական չափանիշների, այն է՝ Բյուզանդական Կայսրության  
տարածքի վրա (նույն տեղում, էջ 103), թեև նա ստիպված է հպանցիկ կերպով  
խոստովանել, որ ընդհանրականությունը պահանջում է ողջ քրիստոնեական ուղղափառ  
եկեղեցիների ներկայությունը: Ընդհանրականության նույն ընկալումն ունի նաև Կաթողիկ  
եկեղեցին, որը, սակայն, երկրի ընդարձակությանն ավելացնում է մարդկային թվաքանակի  
բազմությունը, որով դարձյալ «չկրնար նա ըստիլ *կաթողիկե* կամ *ընդհանրական*  
*եկեղեցի»* (Տե՛ս Գաբրիել արքեպիսկոպոս Այվազեան, Թե ինչպե՞ս Հռոմեական եկեղեցին  
ոչ ևս է Կաթողիկե եկեղեցի: Վաղարշապատ, 1878, էջ 87): Միչդեռ, Հայաստանյայց  
Առաքելական եկեղեցու ըմբռնմամբ, որը սքանչելիորեն արտահայտում է Օրմանյան  
Պատրիարքը, «ճշմարիտ ընդհանրականությունը կճշմարտվի բոլոր այն եկեղեցիներու  
համախմբության մեջ, որոնք կհամաձայնին *Միություն ի կարևորս* մեծ կանոնին շուրջը, և  
հավասարապես կընդունին և կդավանին այն ճշմարտությունները, որոնք  
քրիստոնեության հիմնակետերը կկազմեն» («Հայոց եկեղեցին», էջ 159): Սրանով կարծես  
մեկ անգամ ևս փաստվում է Ընդհանրականության այն ճշմարիտ ըմբռնումը, որի մասին  
Վինկենստիոս Լիբինացին գրել է. «Ընդհանրական եկեղեցին այն է, որ կհավատա  
այսօրվան օրս այն բանին, որում հավատացեր են *ամեն տեղ, ամեն ժամանակ և ամեն  
մարդիկ* (Quod ubique, quod semper, quod ab omnibus creditum est)»:

Դվինի ժողովներին «Տիեզերական» մակդիրը չավելացվեց: Այն երբեք չփորձեց ասել, թե ինքը փրկեց Քրիստոսի Եկեղեցու ուղղափառությունը և անբաժան Եկեղեցուց իր հետ դուրս բերեց Եկեղեցու ընդհանրականությունը, թեև կարող էր այդպես վարվել: Ընդհակառակը, Հայոց Եկեղեցին դառնությամբ տարավ այդ բաժանումն ու դրան հաջորդող դարավոր մեկուսացումը:

Եփեսոսի Տիեզերածողովից հետո Հայոց Եկեղեցին այլևս չընդունեց ո՛չ մի Տիեզերական ժողովի որոշումներ՝ անկախ այն բանից, թե դրանք որևիցե կերպով վերաբերու՞մ էին իրեն, թե՞ ոչ: Բավականին ուշ մույն քայլին դիմեց Առև օրթոդոքս Եկեղեցին, որը Կ. Պոլսի Դ ժողովից հետո, որը հայտնի է «8-րդ Տիեզերածողով» անվամբ, հրաժարվեց, այսպես կոչված, «Տիեզերածողովների» հեղինակությունը ճանաչելուց: Դժբախտաբար, այն չկարողացավ զերծ մնալ իր Եկեղեցու գումարած ժողովին «Տիեզերական» մակդիրն ավելացնելու գայթակղությունից: Այսպես, 1054 թ. հուլիսի 20-ին Միքայելի Ամխագահությամբ Կ. Պոլսում գումարված ժողովի առիթով Հովսեփի Պատրիարքը Միքայել 8-րդ Պալեոլոգ կայսրին նամակ է գրում, ուր ժողովը «Տիեզերական» է անվանում՝ համեմատելով այն երրորդ Տիեզերածողովի հետ<sup>11</sup>:

\*  
\* \*

Այն, որ Հայ Եկեղեցին դադարեց Քաղկեդոնական Եկեղեցու Տիեզերածողովների հեղինակությունը ճանաչելուց, դեռ չի նշանակում, որ դադարեց Առև Եկեղեցու ներքին կյանքում Աստվածային Հայտնության ներկայությունն ընդունելուց: Ընդհանրապես, 3-րդ Տիեզերական ժողովից հետո փակվեց դավանաբանական աստվածաբանության ուսումնասիրության և ամփիչական խնդրո առարկա հանդիսացող դոգմաների «արտադրումը», սակայն այդպիսով ընդարձակ ասպարեզ բացվեց վարդապետական աստվածաբանության համար:

Ամփոփելով մեր շարադրանքը՝ բերենք Եկեղեցու կյանքում Աստվածային Հայտնության ամենացայտուն և բնորոշ օրինակը, որ է՝ Նիկիո Տիեզերածողովում ընդունված «Համագոյության (ὁμοούσια) Վարդապետությունը», որը դարձավ քրիստոնեական աստվածաբանության հիմնական և ամփոխարինելի խարիսխներից

<sup>11</sup> М. Э. Поснов, История Христианской Церкви (до разделения Церквей). Брюссель, 1964, стр. 552.

